



ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015 հոկտեմբեր - 2016 հունվար

---

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ



Ինձ համար մեծ պատիվ է լինել Անձնական տվյալների պաշտպանության նորաստեղծ գործակալության առաջին ղեկավարը: Լուրջ պատասխանատվություն է դրվել իմ ուսերին՝ ձևավորել և կայացնել այս կառույցը ստեղծման օրից հետագա 5 տարիների ընթացքում:

Գործակալության գործունեության առաջնային սկզբունքներից մեկը համարում եմ **հրապարակային և թափանցիկ** աշխատանքը: Անձնական տվյալների պաշտպանության միջազգային օրը ցանկանում եմ ձեր դատին հանձնել գործակալության առաջին հանրային հաշվետվությունը: Այն ներառում է գործակալության կատարած աշխատանքը

ձևավորումից՝ 2015թ. հոկտեմբերի 9-ից մինչ 2016թ. հունվարի 26-ը: Ճիշտ է՝ ժամանակահատվածը խիստ սեղմ է շոշափելի արդյունքների մասին խոսելու համար: Սակայն գործակալության երեք աշխատակիցների ջանքերով կատարված աշխատանքն իսկապես տպավորիչ է:

Գործակալության զարգացման իմ տեսլականը հետևյալն է.

1. Որպես տեղեկատվության ազատության նվիրյալ համարում եմ, որ Գործակալության գործունեության ամենակարևոր սկզբունքներից մեկը կառույցի հանրային **հաշվետվողականության և հրապարակայնության** մակարդակը բարձր պահելն է: Համոզված եմ, որ հաջողության համար պետք է մշտապես երկխոսություն լինի մամուլի և քաղաքացիական հասարակության հետ:
2. Չէի ցանկանա, որ Գործակալությունը դառնար հերթական հսկիչ և տուգանող կառույց. նման կառույցները մեր երկրում շատ են: Պետք չէ համալրել դրանց շարքը: Մեր խնդիրն է քաջալերել և խրախուսել անձնական տվյալներ մշակող ընկերություններին, որ խնամքով մշակեն և անվտանգ պահպանեն դրանք: Վարչական պատասխանատվությունը զուտ լրացուցիչ գործիք է, ոչ թե մահակ, որի «ահից» տվյալներ մշակողները ստիպված լինեն կատարել օրենքը:
3. Գործակալությունը պետք է նախելառաջ կանխարգելիչ գործառույթ իրականացնի: Ուստի մենք մեր դերն առավել շատ տեսնում ենք որպես ռազմավարական կարգավորիչ, ռազմավարություն մշակող կառույց: Գործելով մեր սեփական նախաձեռնությամբ՝ մշակում ենք ուղեցույցներ հանրությանը հուզող հարցերի վերաբերյալ: Շուտով կհրապարակենք գործակալության դիրքորոշումը և մշակած ուղեցույցները տեսահսկման և ուղղակի մարկետինգի հարցերի շուրջ՝ հարցեր, որոնք անհանգստացնում են հասարակությանը: Այս մշակույթը օգնում է, որպեսզի արագ զարգացող իրականության և օրենքի միջև առկա բացը լրացվի փափուկ իրավունքի միջոցով (soft law):

Մենք երկար և խրթին ճանապարհի սկզբին ենք: Հանրության վստահության և համագործակցության շնորհիվ վստահ եմ՝ կհաղթահարենք այդ ճանապարհը և կձևավորենք անձնական տվյալների պաշտպանության օրինակելի կառույց և պրակտիկա:

**Շուշան Դոյոյան, ԲԳԹ**

**ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության պետ**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ


ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունն իր գործունեությունն իրականացնում է թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա: Սա գործակալության գործունեության կարևորագույն սկզբունքն է, ինչն արտացոլված է նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածում: Խիստ կարևորելով հանրությանը գործակալության գործունեության, անձնական տվյալների պաշտպանության ոլորտում տիրող վիճակի և իրականացվող միջոցառումների վերաբերյալ արժանահավատ և ժամանակին տեղեկատվություն տրամադրելը, ինչպես նաև հանրության առջև հաշվետու աշխատանքը՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը ներկայացնում է այս հանրային հաշվետվությունը, որը ներառում է գործակալության՝ 2015թ.-ի հոկտեմբերի 9-ից (գործակալության պետ Շուշան Դոյդոյանի նշանակումից) մինչև 2016թ.-ի հունվարի 26-ն ընկած ժամանակահատվածում իրականացրած աշխատանքները:

«Գործակալությունը տարեկան մեկ անգամ ներկայացնում է հրապարակային հաշվետվություն՝ անձնական տվյալների պաշտպանության բնագավառում առկա իրավիճակի և նախորդ տարվա գործունեության վերաբերյալ» (Հոդված 24):

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ

ՀՀ Արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը մշակել և ընդունել է երկամյա գործողությունների ծրագիր 2015-2017թթ. համար՝ որպես կառույցի զարգացման ռազմավարական փաստաթուղթ: Փաստաթղթի նպատակն է ապահովել գործակալության արդյունավետ ձևավորումն ու զարգացումը: Այն ներկայացնում է անձնական տվյալների պաշտպանության ոլորտում իրավիճակի ուսումնասիրման և գնահատման, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների հարմոնիզացիայի, անձնական տվյալների պաշտպանության միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման և ներդրման, խնդրի վերաբերյալ հանրային կրթության և իրազեկման բարձրացման, ինչպես նաև Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կարողությունների զարգացման վերաբերյալ գործակալության տեսլականը:

## ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ



«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի սկզբունքները և իրավակարգավորումները նորություն էին ոչ միայն քաղաքացիների, այլև անձնական տվյալներ մշակող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև մասնավոր ընկերությունների համար: Դրանով պայմանավորված՝ գործակալության հիմնական գործառույթներից է դարձել խորհրդատվությունը: Գործակալության գործունեության առաջին երեք ամիսների ընթացքում խորհրդատվության համար դիմել է ավելի քան 76 անձ, պետական և մասնավոր կազմակերպություններ: Նրանց տրամադրվել է բանավոր և գրավոր խորհրդատվություն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կիրարկման և անձնական տվյալների պաշտպանության իրավունքի վերաբերյալ:

Դիմողների մեծ մասը (58 դիմող կամ դիմողների 76%-ը) խնդրել է խորհրդատվություն կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական տվյալների մշակման ընթացակարգերի և այդ մասին ծանուցման վերաբերյալ: Մյուսները դիմել են այլ բնույթի հարցերով (օրինակ՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում իրենց պարտավորությունների, անձնական տվյալների պաշտպանության բավարար մակարդակ ունեցող երկրների ցանկի, անձնական տվյալներ մշակելու համար անձի համաձայնությունը ստանալու ձևերի վերաբերյալ):

Ընդհանուր թվով 76 դիմողների գերակշիռ մասը (84%) անձնական տվյալ մշակող պետական կառույցներ են (պետական կառույցների մեջ ներառել ենք ոչ միայն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, այլ նաև դրանց ենթակայության տակ գտնվող իրավաբանական անձանց՝ բժշկական և ուսումնական հաստատություններ (այդ թվում՝ քոլեջներ, ուսումնարաններ), հանրային տրանսպորտի ոլորտում հանրությանը ծառայություն մատուցող կազմակերպություններ և այլն): Գործակալությանը դիմածների 9%-ը (7 դիմող) մասնավոր կազմակերպություններ են, 7%-ն էլ (5 դիմող)՝ քաղաքացիներ և լրագրողներ:

Գործակալության գործունեության առաջին երեք ամիսների ընթացքում խորհրդատվության համար դիմել է ավելի քան 76 անձ, պետական և մասնավոր կազմակերպություններ:

Գործակալությունում հարուցվել են անձնական տվյալների մշակման իրավաչափության վերաբերյալ առաջին վարչական վարույթները: Հարուցված երկու վարույթից մեկը քաղաքացու դիմումի հիման վրա է և վերաբերում է Երևանի քաղաքապետարանի կողմից քաղաքացու ավտոմեքենայի տեսագրության օգտագործմանը՝ որպես քաղաքացու կողմից իրավախախտման փաստի ապացույց: Քաղաքացին խնդրել է ստուգել իր անձնական տվյալների օգտագործման իրավաչափությունը:

Մյուս վարույթը հարուցվել է փակ բաժնետիրական ընկերության դիմումի հիման վրա և վերաբերում է ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից ՓԲԸ-ի բաժնետերերի մասին տեղեկությունները իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում ներառելու իրավաչափությանը: ՓԲԸ-ն խնդրել է Պետական ռեգիստրի գործակալությունից պահանջել իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանից ոչնչացնել ՓԲԸ-ի բաժնետերերի կազմի, նրանց մասնակից դառնալու, մասնակցության չափերի և դրանց փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը: Վերոնշյալ երկու վարույթներն ընթացքի մեջ են 2016թ. հունվարի 26-ի դրությամբ:


## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գործակալությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ մշակել է մասնագիտական կարծիքներ և վերլուծություններ, այդ թվում.


1. Ուսումնասիրվել է ԵՄ անդամ երկրների լավագույն փորձը.
  - տեսահսկման իրավակիրառ պրակտիկան,
  - ուղղակի մարկետինգի իրավակիրառ պրակտիկան,
  - անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինների գործառույթները, կառուցվածքը և անկախության երաշխիքները:  
Կատարված ուսումնասիրությունների հիման վրա մշակվել են ուղեցույցներ այս հարցերի կարգավորման նպատակով:
2. Ուսումնասիրվել են անձնական տվյալների փոխանցման վերաբերյալ դրույթներ պարունակող ՀՀ երկկողմ և բազմակողմ միջազգային գործող, կնքվող կամ կնքվելիք պայմանագրերը և դրանց մասին նախապատրաստվել է համապարփակ տեղեկատվություն:
3. Ուսումնասիրվել է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին (ԴԼԹ բնութագրերի հաշվառում իրականացնելու մասին) և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի համապատասխանությունը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին: Նախապատրաստվել են մասնագիտական կարծիքներ:

Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում առկա մարտահրավերները գնահատելու համար գործակալությանն իր աջակցությունն է ցուցաբերել [Հետազոտական ռեսուրսների կոմկապյան կենտրոնը](#): Գործակալության խնդրանքի հիման վրա Կենտրոնը կատարել է հարցումներ 279 քաղաքացիների շրջանում անձնական տվյալների պաշտպանության ոլորտում իրավիճակի նախնական գնահատման նպատակով:


1. «Տեղյակ եք արդյոք, որ ըստ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իրավունք ունեք իմանալ, պահանջել և ստանալ կազմակերպություններից (պետական և մասնավոր) Ձեր մասին պահվող տեղեկությունը»



2. «Ձեզ մտահոգում է, որ կազմակերպությունները (պետական և մասնավոր) կարող են պահել Ձեր անձնական տվյալները: Նշեք, ինչդեմ Ձեր մտահոգության պատճառները»



3. «Երբ պայմանագիր կամ համաձայնություն եք կնքում, օրինակ, բանկի կամ հեռախոսային օպերատորի հետ, ծանոթանում եք, թե նրանց փոխանցած Ձեր մասին տվյալներն ինչպես կարող են օգտագործվել»





## ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐ

Հանրային իրազեկման ապահովման նպատակով գործակալությունը հանդես է եկել տարբեր ՁԼՄ-ներով՝ ներկայացնելով կառույցի նպատակը, խնդիրները և գործառույթները:

Գործակալության ներկայացուցիչները «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» հասարակական կազմակերպության հրավերով իրականացրել են ուսուցում 9 մասնավոր կազմակերպության ներկայացուցիչների համար՝ ներկայացնելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի առանձնահատկությունները, կարգավորման առարկան, նպատակը, սկզբունքները և այն պարտավորությունների շրջանակը, որը սահմանված է անձնական տվյալներ մշակող մասնավոր ընկերությունների համար:

Գործակալության մշակած ուղեցույցները տեսահսկման և ուղղակի մարկետինգի հարցերի շուրջ շուտով կներկայացվեն հանրության ուշադրությանը՝ աշխատանքային մասնագիտական քննարկումների, սոցիալական ցանցերի և ՁԼՄ հրապարակումների միջոցով:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ ՓԱՓՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔԻ (SOFT LAW) ԶԵՎԱՎՈՐՈՒՄ

Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը կարևորում է անձնական տվյալների պաշտպանության ոլորտում ռազմավարական այնպիսի հարցերի կարգավորումը, որոնք բոլորին են առնչվում և անհանգստացնում: Իրականացնելով կանխարգելիչ գործառույթ և լինելով ռազմավարություն մշակող կառույց՝ գործակալությունը սեփական նախաձեռնությամբ մշակել է ուղեցույցներ հանրությանը հուզող հարցերի վերաբերյալ:

Գործակալությունը սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրել է տեսահսկման, ինչպես նաև ուղղակի մարկետինգի կիրառման հիմնախնդիրները և մշակել համապատասխան ուղեցույցներ դրանց արդյունավետ կարգավորման և անձնական տվյալների պաշտպանության հետ հավասարակշռության հաստատման նպատակով: Այս մշակույթը օգնում է, որպեսզի արագ զարգացող իրականության և օրենքի միջև առկա բացը լրացվի փափուկ իրավունքի միջոցով (soft law):

## ՏԵՍԱՀՄԿՈՒՄ (video surveillance)

Մարդու տեսանկարն անձնական տվյալ է, որը թույլ է տալիս ուղղակի կամ անուղղակի նույնականացնել մարդուն: Տեսահսկումն օր օրի ավելի ու ավելի մեծ տարածում է գտնում Հայաստանում: Մարդիկ տեսահսկվում են գրեթե ամեն քայլափոխի, ուստի խիստ կարևոր է, որ տեսահսկումն իրականացվի բացառապես օրինական և անհրաժեշտ նպատակներով ու սահմաններով: Մա հաշվի առնելով՝ գործակալությունը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին և Եվրամիության չափանիշներին համապատասխան մշակել է Տեսահսկման ուղեցույց, որը կիրառարակվի 2016թ. փետրվարին: Ուղեցույցի նպատակն է սահմանել հանրային վայրերում, պետական և մասնավոր կառույցներում, բնակելի շենքերում տեսահսկման իրականացման պահանջները և իրավական կարգավորումը: Գործակալությունը քաղաքացիների դիմումների հիման վրա և սեփական նախաձեռնությամբ իրականացնելու է տեսահսկումների իրավաչափության ստուգումներ:

Տեսախցիկի միջոցով իրականացվող տեսահսկարահանումը և հսկողությունը, որպես անձնական տվյալի մշակում, պետք է բավարարի տվյալի մշակման, օգտագործման և պաշտպանության պահանջներին ու սկզբունքներին:

## ՈՒՂՂԱԿԻ ՄԱՐԿԵՏԻՆԳ (Direct Marketing)

Հասարակությանը հուզող և լայնորեն քննարկվող մեկ այլ խնդիր է ուղղակի մարկետինգը, երբ մարդկանց բջջային կամ քաղաքային հեռախոսահամարը կապի օպերատորները տրամադրում են այլ անձանց՝ գովազդային և/կամ տեղեկատվական հաղորդագրություններ ուղարկելու և/կամ զանգեր կատարելու համար: Քաղաքացիները, անգամ եթե հեռախոսահամար ձեռք բերելիս, պայմանագիր ստորագրելիս տվել են իրենց հեռախոսահամարի նման օգտագործման համաձայնություն, շատ հաճախ չեն գիտակցում դրա հետևանքները, կամ էլ հետագայում չգիտեն՝ ինչպես կարող են հրաժարվել այդ «ծառայությունից»: Մա հաշվի առնելով՝ Գործակալությունն ուսումնասիրել է ուղղակի մարկետինգի կարգավորման միջազգային փորձը: Մտացված տեղեկության եւ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում Գործակալությունն առաջիկայում նախատեսում է մշակել առաջարկությունների փաթեթ ուղղակի մարկետինգի կարգավորման նպատակով՝ ուղղված հեռախոսակապի ծառայություն մատուցող ընկերություններին:

## ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՄՇԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մշակողը մինչև կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելը պարտավոր է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին ծանուցել տվյալներ մշակելու մտադրության մասին»: Ի դեպ, պարտադիր ծանուցում պետք է ուղարկեն բոլորը, ովքեր մինչև Օրենքի ընդունումն արդեն մշակել են կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ:

2016թ.-ի հունվարի  
26-ի դրությամբ  
Գործակալությունն  
արդեն 37 ծանուցում  
է ստացել:

Անձնական տվյալներ մշակողների՝ Օրենքով սահմանված պարտադիր ծանուցում տրամադրելու պարտականության ապահովման համար գործակալությունը նախապատրաստել և անձնական տվյալներ մշակողներին է ներկայացրել գրություններ՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությանը կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ ծանուցելու անհրաժեշտության վերաբերյալ:

Պարտադիր ծանուցում ներկայացնելու պահանջը նոր պարտավորություն էր, որի մասին անձնական տվյալներ մշակող պետական կառույցները և մասնավոր կազմակերպությունները տեղյակ չէին: Այդ պատճառով էլ, ինչպես նշել ենք «Խորհրդատվություն» բաժնում, գործակալությանը դիմողների մեծամասնությունը դիմել է հենց կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական տվյալների մշակման և համապատասխան ծանուցման կազմման և տրամադրման ձևերի մասին հարցերով: Նրանց համար կազմվել է ծանուցման նմուշ և բանավոր խորհրդատվությունից բացի տրամադրվել է նաև ծանուցման նմուշը՝ որպես խորհրդատվական ուղեցույց օգտագործելու համար:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համագործակցություն է ձևավորվել ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի Անձնական տվյալների պաշտպանության գործակալության և ԵՄ անդամ բոլոր պետությունների համանման կառույցների միջև: Քննարկվում են համատեղ միջոցառումներ, գործողություններ և փոխադարձ այցելություններ իրականացնելու ծրագրեր:

Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում համագործակցության ծրագրերն են քննարկվել նաև Հայաստանում Եվրամիության պատվիրակության, Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ: Գործակալությունն իր միջազգային գործընկերներին է ներկայացրել գործակալության հզորացման ծրագրի համապարփակ նախագիծ:

Եվրոպայի խորհրդի «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեում (T-PD) որպես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ առաջադրվել է Անձնական տվյալների պաշտպանության գործակալության պետ Շուշան Դոյդոյանի թեկնածությունը: